

**ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ  
ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՍՏԱՏԱՐԱՆ**

**ՍԻՄՈՆՅԱՆ ՎԱՐԴԻԹԵՐ ՎԼԱՂԻՄԻՐԻ**

**ԳՐԱԿԱՆ ՏԱՐՐԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԸ ՈՐՊԵՍ ԿՐՏՍԵՐ  
ԴՊՐՈՑԱԿԱՆԻ ԸՆԹԵՐՑՈՂԱԿԱՆ ԿԱՐՈՌՈՒԹՅԱՆ ԶԵՎԱԿՈՐՄԱՆ  
ՀԻՄՔ**

**ԺԳ 00.02- «Դասավանդման և դաստիարակության մեթոդիկա» (հայոց  
լեզու) մասնագիտությամբ մանկավարժական գիտությունների  
թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության**

**ՍԵՂՄԱԳԻՐ**

**Երևան -2014**

Ատենախոսության թեման հաստատվել է Խ. Արովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում:

Գիտական ղեկավար՝

բանասիրական գիտությունների  
թեկնածու Ա. Վ. Գալստյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝

մանկավարժական գիտությունների  
դոկտոր Ի.Կ. Կարապետյան

Առաջատար կազմակերպություն՝

մանկավարժական գիտությունների  
թեկնածու Շ.Ռ. Սարգսյան

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2014թ. նոյեմբերի 28-ին՝  
ժամը 14<sup>00</sup>-ին, ԵՊՀ-ում գործող ԲՈՅ-ի մանկավարժության 065 մասնագիտական  
խորհրդում:

Նաև 0025, Երևան, Արովյան 52<sup>ա</sup>, ԵՊՀ-ի հայ բանասիրության ֆակուլտետի  
մասնաշենք, թիվ 203 լսարան:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ԵՊՀ-ի գրադարանում:

Մեղմագիրն առաքված է՝ 2014թ. հոկտեմբերի 27-ին:

Մանկավարժության 065 մասնագիտական  
խորհրդի գիտական քարտուղար,  
մանկ.գիտ.թեկնածու, դոցենտ՝

Ա. Փ. Ղազարյան

## Աշխատանքի ընդհանուր բովանդակությունը

**Դետագոտության արդիականությունը** պայմանավորված է մի կողմից մեր երկիրը քաղաքական, համաշխարհային սոցիալ-տնտեսական գործընթացների հարահոսում մշտավես մրցունակ պահելու համար բազմակողմանիորեն զարգացած, բազմամշակույթ, գրագետ, բարձր ընթերցողական կարողությամբ և ցկյանս կորվող անձ դաստիարակելու կենսական պահանջով, մյուս կողմից՝ տարրական դպրոցում նշված կարողությունների և որակների ծևավորմանը միտված մեթոդական համակարգի անհամապատասխանությամբ և անկատարությամբ:

**Դետագոտության նպատակը** կրտսեր դպրոցականների ընթերցողական կարողության զարգացմանը նպաստող մեթոդական համակարգի կատարելագործումն է և նրա փորձարկումը մայրենի դասերի ընթացքում:

**Դետագոտության օբյեկտը** տարրական դասարաններում մայրենի դասերին ընթերցված ստեղծագործությունների շուրջ կատարվող բնագրի գրական բաղադրիչների (գաղափար, ենթատեքստ, կերպարներ, պատճառահետևանքային կապեր և այլն) ընթանան, յուրացման և կշռադատման մեթոդների համակարգն է:

**Դետագոտության առարկան** մայրենի դասի ժամանակ ընթերցողական կարողության ծևավորմանը նպաստող գրական տարրական գիտելիքների ուսումնասիրման մեթոդական գործընթացն է:

### Դետագոտության գիտական վարկածը

Տարրական դասարաններում մայրենի դասի ժամանակ կարդացած բնագրի շուրջ կատարվող աշխատանքը կնպաստի կրտսեր դպրոցականների կարողալու պահանջմունքի առաջացմանը, ընթերցողական կարողության ծևավորմանը, ընթերցակիրության դաստիարակմանը, մտահորիզոնի ընդլայնմանն ու արժեհամակարգի ամբողջացմանը, եթե՝

- կարդացած նյութի շուրջ տարվող աշխատանքի ընթացքում գրական տարրական գիտելիքների ծեռքբերման և այդ ճանապարհով ստեղծագործության մեջ ներկայացված իրադրությունների, կերպարների, երևույթների, գաղափարների, ենթատեքստի համակողմանի վերլուծությունը դառնա մայրենի դասի գերխնդիր,
- այդ գործընթացն իրականացվի անձնակողմնորոշչի, աշակերտակենտրոն մոտեցման հիմնա վրա՝ հաշվի առնելով սովորողների տարիքային առանձնահատկությունները, ճանաչողական հետաքրքրություններն ու պահանջմունքները,
- մայրենի դասի ընթերցանության բաղադրամասի շուրջ իրականացվող աշխատանքը դիտվի որպես կրտսեր դպրոցականների ընթերցողական կարողության զարգացման գործոն և կարդալու պահանջմունքի բավարման միջոց:

**Դետագոտության նպատակին** համապատասխան և առաջ քաշված վարկածի իրականացման համար առաջադրվել են հետևյալ **խնդիրները**.

1. Բացահայտել և վերլուծել մայրենի դասավանդման գործընթացում գրական տարրական գիտելիքների ուսումնասիրման պատճական նախադրյալներն ու մեթոդաբանության լայն շարժընթացը:

2. Դասալսումների, ուսուցչների շրջանում կազմակերպված հարցումների միջոցով բացահայտել տարրական դպրոցում իրականացվող մայրենի դասի ընթերցանության փուլի առանձնահատկությունները գրական տարրական գիտելիքների ձեռքբերման հնարավորությունների համատեքստում, որոշել տարրական դպրոցի մայրենի դասագրքերում գետեղված ստեղծագործությունների՝ կրտսեր դպրոցականների ընթերցողական կարողության ծևավորման և զարգացման ընդարձակ հնարավորությունները:

3. Որոշել և հիմնավորել գրական տարրական գիտելիքների սահմանները և դրանց յուրացման արդյունավետությանը նպաստող մեթոդական համակարգը տարրական դասարաններում:

4. Մշակել դիտարկվող հիմնախմբի առնչությամբ տարրական դպրոցի մայրենի դասին ներկայացվող պահանջ-կողմնորոշումներ:

5. Առաջարկվող մեթոդական համակարգի արդյունավետությունը ստուգելու նպատակով հանրապետության տարբեր դպրոցներում իրականացնել փորձարական աշխատանքներ և հիմնավորել այդ համակարգի հնարավորությունները հիմնախմբի լուծման համատեքստում:

#### **Նետազոտության մեթոդաբանական հիմք են ծառայել՝**

- հումանիստական և մանկակենտրոն մանկավարժության ու հոգեբանության այն հիմնադրույթները, որոնց համաձայն՝ յուրաքանչյուր աշակերտ եղակի է, ունի որոշակի պահանջմունքներ, որոնք ընկած են նրա գործունեության հիմքում, և սովորելուն միտված նրա ձգտումները պայմանավորված են ակտիվ դրավագաժամներով (Գ. Էղիսյան, Ա. Բահաթրյան, Ա. Թոփուզյան, Կ. Ողջերս, Ա. Մասլով, Ի. Յակիմինսկայա և այլք).
- կրտսեր դպրոցականների տարիքային առանձնահատկությունները դիտարկող հոգեբանանանկավարժական հետազոտությունները, որոնց համաձայն արդյունավետ ուսումնական գործունեության հիմնական գործոնը սովորելու գործընթացում աշակերտի՝ որպես սուբյեկտի ակտիվ մասնակցությունն է (Ղ. Ելկոնին, Վ. Դավիթով, Լ. Զանկով, Ի. Յակիմինսկայա, Ա. Բահաթրյան, Զ. Գյուլամիրյան և այլք).
- տարրական դպրոցում մայրենի դասի կազմակերպման նպատակների, մեթոդական համակարգի բազմանպատակայնության, գրական և լեզվական տարրական գիտելիքների ուսումնասիրման գործնականության սկզբունքի, սովորողների՝ կարդալու հմտության ծևավորման գործընթացը ընթերցողական կարողության ձեռքբերմանը միտելու սկզբունքները (Ն. Ուժիշեստվենսկի, Մ. Օմորոկովա, Վ. Գորեցկի, Ղ. Աղայան, Լ. Շանթ, Ա. Ղարիբյան, Թ. Զուհարյան, Ս. Գյուլբուղայյան, Ե. Բոնդարևսկայա, Ա. Տեր-Գրիգորյան, Զ. Գյուլամիրյան և այլք):
- տարրական դպրոցում մայրենի դասի կազմակերպման նպատակների, մեթոդական համակարգի բազմանպատակայնության, գրական և լեզվական տարրական գիտելիքների ուսումնասիրման գործնականության սկզբունքի, սովորողների՝ կարդալու հմտության ծևավորման գործընթացը ընթերցողական կարողության ձեռքբերմանը միտելու սկզբունքները (Ն. Ուժիշեստվենսկի, Մ. Օմորոկովա, Վ. Գորեցկի, Ղ. Աղայան, Լ. Շանթ, Ա. Ղարիբյան, Թ. Զուհարյան, Ս. Գյուլբուղայյան, Ե. Բոնդարևսկայա, Ա. Տեր-Գրիգորյան, Զ. Գյուլամիրյան և այլք):

Առաջարկված խնդիրների լուծման, ելակետային մեթոդական դիրքորոշումների ստուգման և հետազոտության գիտական վարկածի հաստատման նպատակով կիրառել ենք հետևյալ մեթոդները՝

- ինչպես դասական, այնպես էլ արդի հոգեբանանանկավարժական գրականության, կրթության վերաբերյալ պետական փաստաթղթերի, մայրենիի

- տարրական դպրոցի ծրագրերի, մեթոդիկաների, դասագրքերի, դրամց մեթոդական ուղեցույցների վերլուծություն,
- դասալսումների ՀՀ հանրակրաբական դպրոցների տարրական դասարաններում (ինչպես փորձարարական, այնպես էլ ստուգողական՝ ուսումնական գործնթացի ուսումնասիրման, վերլուծության և ընդհանրացման նպատակով),
  - մանկավարժական գիտափորձ՝ մեր կողմից երաշխավորվող մեթոդական համակարգի փորձարկման, արդյունքների ուսումնասիրության ու վերլուծության համար,
  - զրոյց, անկետավորում, աշակերտների աշխատանքների ուսումնասիրում և արդյունքների դիտարկում:

#### **Հետազոտության կազմակերպման հիմնական փուլերը**

**Առաջին փուլում** (2006-2009թ.) ուսումնասիրել ենք հետազոտության հիմնախնդրի վերաբերյալ ավանդական և արդի մանկավարժահոգեբանական գրականություն, կատարել տեսական վերլուծություն, որոշել ենք մեր ուսումնասիրությունների թիրախը, ելակետային դրույթները, առարկան, խնդիրները, դասակարգել գիտափորձի անցկացման մեթոդներն ու տեխնոլոգիաները, նախագծել ընթացքը, ընտրել հետազոտության բազան և փորձին մասնակիցների համակազմը:

**Երկրորդ փուլում** (2010-2012թ.) փորձարարական դպրոցներում կատարել ենք հետազոտության խնդիրներին ու նպատակին համապատասխան դասալսումներ, ինչպես նաև փորձարկել մեր կողմից մշակված մեթոդական սկզբունքների և երաշխավորությունների համակարգը:

Հստակեցրել ենք այն մեթոդներն ու հնարները, կրտսեր դպրոցականների ընթերցողական կարողության զարգացմանը նպաստող գրական տարրական այն գիտելիքների սահմանները, որոնք կնպաստեն ընթերցանության դրդապատճառայնությանը և նրանց ընթերցողական պահանջնունքի բավարարմանը:

**Երրորդ փուլում** (2013-2014թ.) անփոփել ենք մեր հետազոտության արդյունքները, համակարգել ծեռք բերած գիտատեսական դրույթները, ձևակերպել մայրենի դասին վերաբերող մեթոդական երաշխավորություններ, շարադրել ենք ատենախոսությունը:

#### **Հետազոտության գիտական նորույթը**

Հետազոտության շնորհիվ ծեռք են բերվել նոր կամ արդեն ծեռք բերվածը կատարելագործող և լրացնող հետևյալ արդյունքները.

1. Կրտսեր դպրոցականների ընթերցողական կարողության ձևավորման գործնթացը դիտարկել ենք ինչպես մեթոդաբանական, այնպես էլ մանկավարժահոգեբանական տեսանկյունով՝ իրեն առաջնայնություն ընդունելով մայրենի դասի աշակերտական նպատակները:
2. Մշակել ենք բնագրի շուրջ վերլուծական-համադրական մեթոդով և փոխգործուն մեթոդական հնարներով իրականացվող գրական տարրական գիտելիքների ընթացմանը միտված աշխատանքի բովանդակություն ու մեթոդաբանությունը:
3. Գիտափորձով ստուգել ենք և հիմնավորել, որ տարրական դպրոցում մայ-

ոենի դասերի ժամանակ կարդացած բնագրի շուրջ կատարվող գրական տարրական գիտելիքների կիրառումը նպաստում է բնագիրը հասկանալուն, երեխայի արժեհամակարգի վրա ազդեցությանը և ընթերցողական կարողության ձևավորմանը:

#### **Դետագուտության տեսական նշանակությունը**

1. Դետագուտության ընթացքում բարձրացրած հարցադրումները և դրանց հիմնավորումները նայրենի տարրական ուսուցման համակարգում նոր մոտեցումներ են առաջարում ընթերցողական կարողության ձևավորմանը:
2. Մշակվել են մայրենի դասի ընթերցանության բաղադրամասի՝ փոխգործուն մեթոդներով իրականացման հնարներ նպատակառողպատճեն ընթերցողական կարողության ձևավորմանը և այն հմտության վերածելու խնդրի լուծմանը:
3. Մշակվել են կրտսեր դպրոցականների կողմից գրական տարրական գիտելիքների գիտակցական յուրացմանը նպաստող մեթոդների կիրառման հնարներ:

#### **Դետագուտության գործնական նշանակությունը**

Դետագուտության ընթացքում ստացված տվյալները, մեթոդաբանական հիմնավորումները, երաշխավորություններն ու պահանջ-կողմնորոշումները կարող են օգտակար լինել տարրական դպրոցի ուսուցիչներին, մանկավարժական բուհերի ուսանողներին, դասագրքաստեղծ հեղինակային խմբերին, բուհերում հայց լեզվի մեթոդիկայի տեսական ու գործնական պարապմունքներ վարող դասախոսներին:

#### **Պաշտպանության են ներկայացվում հետևյալ դրույթները՝**

1. Գրական տարրական գիտելիքների ուսումնասիրումը տարրական դպրոցում կարդացած բնագրի շուրջ կատարվող աշխատանքի պարտադիր բաղդրիչն է, որի միջոցով կարող են լուծվել մայրենի դասի ընթերցանության փուլի բոլոր խնդիրները՝ իրականացնելով ընկալում – իմաստավորում – կշռադատում նտածական գործնաթագները:
2. Գործնական ճանապարհով և որոշակի փուլերով ձեռք բերած գրական տարրական գիտելիքները կրտսեր դպրոցականների ընթերցողական կառողության մակարդակի բնութագրիչներ են, որոնց ձևավորման արդյունավետության երաշխիքը անձնակողմնորոշչի ուսումնական մթնոլորտն է:
3. Մեր կողմից մշակված գրական տարրական գիտելիքների ուսումնասիրման մեթոդական համակարգն ապահովում է կրտսեր դպրոցականների ընթերցողական կարողության ձևավորման գործնաթագի արդյունավետությունը՝ այն հասցնելով հմտության աստիճանի:
4. Կրտսեր դպրոցականների ընթերցողական կարողությունների ձևավորումն ընթանում է տարրական դպրոցի չափորոշիչների և մայրենի ծրագրի շրջանակներում՝ չանտեսելով նաև սովորողներից կարդալու կարողության որոշակի մակարդակ պահանջող այլ ուսումնական առարկաների հնարավորությունները:

**Հետազոտության հավաստիությունն ու հիմնավորվածությունն ապահովվել են.**

- ✓ դիտարկվող հիմնախնդրի շուրջ հոգեբանամանկավարժական և մեթոդական գրականության մեջ առկա հայեցակարգերի, գիտատեսական սկզբունքների ուսումնասիրմանը և վերլուծությամբ,
- ✓ հետազոտության առարկային, խնդիրներին, նպատակներին և վարկաժին համարժեք ընտրված ու կիրառված մեթոդներով, դրանց արդյունքների համալիր վերլուծությամբ,
- ✓ հետազոտության տեսական դրույթների փորձարարական հիմնավորմանը, գիտափորձի համակարգված բնույթով, փորձարկվող համակազմի քանակական ընդգրկունությամբ, հետազոտության արդյունքներից բխող վիճակական մեթոդների կիրառմանը, հետազոտության խնդիրների և պաշտպանության ներկայացված դրույթների տրամաբանական միասնությամբ, հետազոտության արդյունքներից բխող եզրակացությունների հիմնավորվածությամբ:

**Հետազոտության արդյունքների փորձաքննությունն ու արդյունքների ներդնումն իրականացվել են Կոտայքի մարզի Մրգաշենի (2009-2010թ.), Երևանի թիվ 189 (2007-2009թ.), 135 (2010-2011թ.), 200 (2011-2012թ.), 117 (2012-2013թ.) հանրակրթական դպրոցների տարրական դասարաններում:**

Հետազոտության աշխատանքի ընթացքն ու ատենախոսության բովանդակությունը քննարկվել են նշված փորձարարական դպրոցների մեթոդիավորման և Խ.Արովյանի անվան ՀՊՄՀ մայրենիի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի Գիտաժողովում:

Ատենախոսության հիմնախնդրի շուրջ և կատարած հետազոտությունների վերաբերյալ տպագրվել է 4 հոդված:

#### **Ատենախոսության ծավալն ու կառուցվածքը**

Ատենախոսությունը բաղկացած է «Ներածությունից», երկու գլխից, եզրակացություններից և օգտագործած գրականության ցանկից:

Ատենախոսության ծավալը համակարգչային 139 էջ է:

### **ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ**

Ներածության մեջ ներկայացված են հետազոտվող թեմայի արդիականությունը, օբյեկտը, առարկան, գիտական վարկածը, աշխատանքի նպատակն ու խնդիրները, բացահայտված է հիմնախնդրի ուսումնասիրվածության աստիճանը, շարադրված են ուսումնասիրության մեթոդները, գիտական նորույթը, տեսական և գործնական նշանակությունը, պաշտպանության ներկայացված դրույթները, հետազոտության արդյունքների հավաստիությունն ու հիմնավորվածությունը, ինչպես նաև ատենախոսության կառուցվածքը:

Առաջին՝ «Ընթերցողական կարողության ծևավորման հիմնախնդիրը կարդացած բնագրի շուրջ աշխատանքի ընթացքում» գլխում դիտարկել ենք կրտսեր դպրոցականների ընթերցողական կարողության զարգացման հիմնախնդիրը: Այս գլխի առաջին՝ «Ընթերցողական կարողության ծևավորման և այդ գործընթացում

գրական տարրական գիտելիքների դերի գիտակցումը. (պատմական ակնարկ)» Ենթագլխում ներկայացրել ենք խնդրո առարկա հարցի դրվածքը հայ և արտասահմանյան մասնագիտական գրականության մեջ:

19-րդ դարի 50-ական թվականներին կրթության կազմակերպման և նրա բովանդակության ձևավորման ուղղությամբ առկա եվրոպական և ռուսական նորարարական մտքերը թափանցեցին հայ իրականություն՝ նպաստելով ընդհանրապես կրթության, մասնավորապես կարդալու մեթոդիկայի զարգացմանը: Այս փուլում ասպարեզ եկան և նշանակալի աշխատանք կատարեցին Ստ. Նազարյանը, Մ. Նալբանդյանը, Յ. Բերբերյանը և այլք: Հետագայում՝ 19-րդ դարի 70-ական թվականներից սկսած, սերնդի կրթության հիմնախնդիրներով զբաղվեցին հայ մանկավարժության զարգացման երախտավորներ Ս.Մանդինյանը, Ն.Տեր-Ղևոնյանը, Դ.Աղայանը, Ա.Բահաթրյանը, Յ.Նազարյանը, Ստ. Պալասանյանը:

Տավոք, 19-րդ դարի վերջին երկու տասնամյակում ցարական կառավարության՝ ժողովորդներին ծովագրություն հետևածքով փակվեցին հայկական դպրոցները: Միայն 20-րդ դարի սկզբին դրանք կրկին վերաբացվեցին. մանկավարժական ասպարեզում երևացին Ստ. Լիսիցյանի, Շովի. Թումանյանի, Տ. Ռասմանյանի, Լ. Շանթի, Ավ. Իսահակյանի, Թ. Խօնմայանի, Մ. Աբեղյանի և այլոց հայոց լեզվի դասագրքերը:

Նշված մեթոդիկաներն առավելապես վերաբերում էին կրթության տարրական օղակին, քանի որ նախախորհրդային շրջանում հայ դպրոցը հիմնականում տարրական կամ ծխական էր:

1938 թվականից՝ շուրջ երեք տասնամյակ, կրթության ասպարեզի առաջընթացն ապահովեցին Արարատ Ղարիբյանի հայոց լեզվի և մեթոդիկայի դասագրքերը, որոնք վերաբերում էին կրթության հաջորդ փուլին՝ միջին դասարաններին:

Հետագա տարիներին մեթոդական նոր մոտեցումներ դրսևորվեցին նաև պրոֆեսոր Սիրակ Գյուլբուդայանի «Հայոց լեզվի մեթոդիկայում», որն աչքի էր ընկնում լեզվաբանական վերլուծությունների ինքնատիպությամբ:

Նշված և բազմաթիվ այլ հեղինակներ դիտարկել են դասավանդման մեթոդիկային առնչվող հիմնախնդիրներ, սակայն նրանցից ոչ մեկը չի զբաղվել կրթության այդ օլակում կրտսեր դպրոցականների՝ գրական տարրական գիտելիքների ձեռքբերման խնդիրներով:

Հայ իրականության մեջ իբրև հիմնարար հետազոտությունների արդյունք, իբրև տարրական դպրոցում մայրենի ուսումնասիրության գործնքացի անբողջական դիտարկում և մայրենի դասի բովանդակության ու կառուցվածքի մանրազնին մանկավարժական և լեզվաբանական ընդհանրացում 20-րդ դարի երկրորդ կեսին ասպարեզ իջան պրոֆեսոր Աշոտ Տեր-Գրիգորյանի աշխատությունները, որոնց մի մասն ամփոփվեց «Հայոց լեզվի մեթոդիկա» ստվարածավալ գրքում:

Անկախության տարիներին ՀՀ հանրակրթական դպրոցի տարրական դասարաններում կատարված կառուցվածքային և բովանդակային փոփոխությունների հիման վրա, ինչպես նաև հարազատ մնալով և շարունակելով հայ դպրոցում երկարամյա գործունեության մեջ գտնվող մեթոդիկայի ավանդույթները, Զ. Գյուլամիրյանի հեղինակությանը 2006 թվականին հրատարակվեց «Հայոց լեզվի

տարրական ուսուցման մեթոդիկա» բուհական դասագիրքը, որում նա անդրադարձել է գրական տարրական գիտելիքների ուսումնասիրման հիմնախնդրին, տվել է դրանց գիտամեթոդական հիմնավորումներն ու կարևորել դրանց անհրաժեշտությունը կրտսեր դպրոցականների ընթերցողական կարողության ձևավորման ու զարգացման գործընթացում:

Ի տարբերություն վերջին մի քանի տասնամյակում հրատարակված հայոց լեզվի ծրագրերի՝ ՀՀ տարրական դպրոցի մայենիի նոր ծրագրում նախատեսված է գրական տարրական գիտելիքների ուսումնասիրում:

Ընթերցողական կարողության ձևավորման հիմնախնդրին ավելի վաղ են անդրադարձել ռուսական մեթոդիկայում:

Այսպիսով, ուսումնասիրելով ընթերցողական կարողության ձևավորման գործընթացի ողջ պատճական շարժմանը՝ համոզվեցինք, որ այն այսօր դիտվում է որպես հասարակության ապագա քաղաքացու ընդհանուր՝ լայն ինաստով կոնպետենտության, գործառնական գրագիտության կարևոր, անհրաժեշտ քաղաքարանական:

Առաջին գլուխ՝ «Ընթերցասիրությունն ու ընթերցողական կարողությունը որպես ազգային անվտանգության, ազգի առաջընթացի կարևոր գործոններ» երկրորդ ենթագլխում ընթերցողական կարողությունը դիտարկում ենք որպես ազգային անվտանգության և զարգացման կարևոր գործոն: Տվյալներ ենք ներկայացնում արտասահմանում և Հայաստանի Հանրապետությունում նշված հիմնախնդրի լուծնանն ուղղված ծրագրերի ու աշխատանքի բովանդակության վերաբերյալ, դիտարկում ենք ԱՄՆ-ում, Նիդեռամներում, Գերմանիայում, Մեծ Բրիտանիայում, նախկին ԽՍՀՄ-ում և այսօր՝ ԱՊՀ երկրներում մատադ սերնդի հետ իրականացվող աշխատանքները նրանց ընթերցողական կարողության ձևավորման ուղղությամբ: Թվերի և փաստերի միջոցով հիմնավորում ենք, որ աշխարհին այսօր գիտակցում է կարդալու, ընթերցասիրության կարևորությունը՝ նշված հիմնախնդրի նկատմամբ դրսևորելով պետական քաղաքականություն:

Հայաստանի անկախության վերջին երկու տասնամյակի ընթացքում դարձյալ գիտակցվեց գրքի և կարդալու, ընթերցող հասարակություն ձևավորելու անհրաժեշտությունը: Մասնավոր հրատարակությունների մոցակցությունը հրատարակիչներին մղեցին տպագրելու պահանջարկ ներկայացնող հայ, օտարալեզու և թարգմանական գրականություն, որի հասցեատերերը աստիճանաբար հետաքրքրվում են դրանցով, կարդում են, քննարկում:

Յուրաքանչյուր տարի ՀՀ կրթության և գիտության, ինչպես նաև մշակույթի նախարարությունների նախաձեռնությամբ և հրատարակությունների անմիջական մասնակցությամբ իրականացվող «Գրքի շաբաթները» ակտիվացնում են սովորողների ընթերցողական գործունեությունը, ընդարձակում գրքի և ընթերցանության նկատմամբ սերնդի հետաքրքրությունների սահմանները: Պատահական չեն, որ ՅՈՒՆԵՍԿՕ-ի որոշմամբ 2012 թվականին երևանը ճանաչվեց «Համաշխարհային գրքի մայրաքաղաք»:

Հատկանշական ենք համարում մասնավորապես տարրական կրթության ոլորտում կարդալու հմտության ձևավորման, ընթերցողական կարողության զարգացման ուղղությամբ առկա մեթոդական տեսության մեջ և պրակտիկայում

դրսնորվող նորովի մոտեցումները, մշակված և աստիճանաբար պրակտիկայում ներդրվող այլընտրանքային մեթոդիկաներն ու գործընթացի նկատմամբ սկզբունքային դիրքորոշումները, որոնք նեժապես կնպաստեն հասարակության ընթերցողական կարողության ձևավորմանն ու զարգացմանը:

**Առաջին գլխի երրորդ՝ «Բացատրական ընթերցանության մեթոդի բաղադրամասերը և դրանց՝ կրտսեր դպրոցականների ընթերցողական կարողության ձևավորմանը նպաստող գործնմերը» Ենթագլխում քննարկել ենք կրտսեր դպրոցականների ընթերցողական կարողության ձևավորմանն ու զարգացմանը նպաստող բացատրական ընթերցանության մեթոդը և նրա բաղադրամասերի իրականացման հնարները:**

Հաճամանորեն դիտարկելով բացատրական ընթերցողության մեթոդի 5 բաղադրամասերը (զրույց, կարդալ, բառային աշխատանք, պատմել, անփոփել)՝ մենք նաև նպաստողապես կանգ ենք առել դրանց կիրառման ընթացքում ընթերցողական կարողության ձևավորմանն ու զարգացմանը նպաստող մեթոդական հնարների վրա:

Ուսումնասիրելով տարրական դպրոցի մայրենի դասերը կրտսեր դպրոցականների ընթերցողական կարողության ձևավորման և զարգացման տեսանկյունից՝ մենք համակարգել ենք մի խումբ խնդիրներ և ներկայացրել դրանց լուծման՝ մեր կողմից փորձարկված որոշ մեթոդական երաշխավորություններ:

Այդ պահանջ-կողմնորոշումները մենք ներկայացրել ենք ԽԻԿ (Խթանում, իմաստավորում, կշռադատում) համակարգով իրականացվող մայրենի դասի ընթացքում գեղարվեստական բնագրերի շուրջ կատարվող աշխատանքների օրինակով՝ առաջնորդվելով բացատրական ընթերցանության բոլոր բաղադրամասերով:

Փորձարարությամբ հիմնավորել ենք, որ բացատրական ընթերցանության մեթոդի «կարդալու» բաղադրամասի միջոցով աշակերտները ոչ միայն սովորում են կարդալ, այլև կարդալու տարբեր տեսակների կիրառումը նպաստում է ստեղծագործության կերպարների վարքի ընթանան ու դրանով պայմանավորված՝ դեպքերի հաջորդականության, դրանց տրամաբանության և պատճառահետևանքային կապերի ընկալմանը:

Այս Ենթագլխում ներկայացրել ենք նաև հիմնախմնդրի լուծմանը նպաստող մի շարք փոխգործուն մեթոդներ և II-IV դասարանների մայրենի դասագրքերում գետեղված նյութերի ուսումնասիրման գործընթացում դրանց արդյունավետ կիրառնան ձևեր («Բառաբաժն», «Կողմ-դեմ» և այլն)՝ նկատի ունենալով՝

- աշակերտների պահանջմունքներն ու ակնկալիքներն ընթերցվող ստեղծագործությունից, երեխաններին հուզող խնդիրներ և նրանց գործունեությունն ուղղորդել ենք դրանց բավարարմանը,
- կրտսեր դպրոցականների բազմարնույթ մտածողության տեսակներն ու դրանց դերը ընթերցողական կարողության ձևավորմանը՝ միտված գրական տարրական գիտելիքների ընթրոննան գործընթացին,
- սովորողների ազատ մտածելու, արտահայտվելու, դատողությունների ամելու, ստեղծագործության գործող անձանց և նրանց գործողությունների մասին սեփական կարծիքն արտահայտելու իրավունքները,
- կրտսեր դպրոցականների կենսափորձն ու դրա հաշվառման կարևորու-

թյունը բնագրի շուրջ իրականացվող վերլուծական-համադրական աշխատանքի ընթացքում,

- գեղարվեստական ստեղծագործությունների միջոցով գրական տարրական գիտելիքների ձեռքբերման գործընթացի գործնական բնույթն ու ուսուցման մատչելիության և հաջորդականության սկզբունքները,
- կրտսեր դպրոցականների հոգեկան գործընթացների, մասնավորապես՝ ըմբռնման, գգացմունքների և երևակայության ինքնատիպությունը:

Առաջին գլխի չորրորդ՝ «Ընթերցողական կարողություն» ու ընդհանուր բնութագրիչները» ենթագլխում ներկայացրել ենք մեր ուսումնաասիրությունների ընթացքում ընթերցողական կարողության բաղադրիչների վերաբերյալ ձեռք բերած գիտելիքներն ու պրակտիկայում դրանց փորձարկման արդյունքները: Մասնավորապես ուսումնասիրել ենք և քննարկել «Ընթերցողական կարողություն լայն իմաստով» սկզբունքային մոտեցումները և հանգել եզրակացության, որ, բնականաբար, տարրական դպրոցի կրթական չափորոշիչներով և առարկայական ծրագրերով նախատեսված կարդալու կարողության ձևավորման և զարգացման նակարդակները համապատասխանում են «ներ իմաստով» ընթերցողական կարողությանը: Սակայն ընթերցողական կարողության այս մակարդակի զարգացման տեսլականը, ի վերօն, «լայն իմաստով» ընթերցողական կարողության ձևավորումն է, որն անձին պետք է իր հետագա՝ շարունակական կրթության ընթացքում:

Մեր ուսումնասիրությունները, ուսուցիչների հետ անցկացրած գրույցները, հասուու նպատակով ծրագրված ու նախապատրաստած և ուսուցիչների ու պրակտիկանտների վարած դասերը, դրանց արդյունքների վերլուծությունը մեզ հանգեցրին այն եզրակացության, որ աշխատել կրտսեր դպրոցականների ընթերցողական կարողության զարգացման ուղղությամբ՝ առանց հաշվի առնելու նշված տարիի երեսաների հոգեկան գործընթացների առանձնահատկությունները, ինքնատիպությունը, հատկապես նրանց մտածողության տեսակներն ու երևակայության վառ թրիչը, նշանակում է անտեսել գործընթացի արդյունավետությունը բարձրացնող մի շարք կարևոր գործոններ:

Կրտսեր դպրոցականների երևակայության ակտիվությունն ու ինքնատիպությունը պայմանավորված են նրանց մտածողության բազմաբնույթությանը, որով և յուրաքանչյուր երեխա տարբերվում է մյուսից նաև իր ընթերցողական կարողության բաղադրիչների մակարդակներով:

Դիմք ընդունելով մեր փորձարարական դասերը և ուսումնասիրություններ՝ ներկայացրել ենք ընթերցողական կարողության հիմնական բաղադրիչները, որոնք հնարավոր է ձևավորել մայրենիի դասագործընթացում՝ կարդացած ստեղծագործության շուրջ պարուրածն սկզբունքով աշխատանքի ընթացքում:

Մեր ատենախոսության երկրորդ՝ «Գրական գիտելիքները որպես կրտսեր դպրոցականների ընթերցողական ձևավորման հիմնական խթանիչներ» գլխում քննարկում ենք տարրական դպրոցում ուսումնասիրվող գրական գիտելիքների սահմանները, դրանց ուսումնասիրման գործընթացը՝ այն դիտարկելով որպես կրտսեր դպրոցականների ընթերցողական կարողության ձևավորման հիմնական խթանիչ:

Երկրորդ գլխի առաջին՝ «Գրական գիտելիքների ուսումնասիրման գործընթացի փուլերը և առանձնահատկությունները տարրական դպրոցում» խորագրով Ենթագլխում հիմնավորում ենք, որ գրական գիտելիքներն անհրաժեշտություն են ընթերցողական կարդության ձևավորման գործընթացում, և դրանք պիտի ուսումնասիրվեն 2 փուլով:

Այս համատեքստում դիտարկելով մեր ուսումնասիրության հիմնախնդիրը՝ մենք գրական վարկածը կառուցելիս կարևորել ենք գրական տարրական գիտելիքների ուսումնասիրման մերողների՝ աշակերտների հետաքրքրությունների, կարդալու նկատմամբ նրանց ձգուման, մոտակա և հեռահար նպատակների հաշվառմամբ ընտրությունը և կիրառումը: Այսինքն, առաջնությունը տվել ենք սովորողների ընթերցողական ցանկությանը, հետաքրքրությունների բավարարմանը և կարդալու գործընթացի իրականացման աշակերտական նպատակներին:

Մեր ուսումնասիրությունները մեզ բերեցին այն համոզման, որ կարդացած բնագրի գաղափարական բովանդակության ընթոնման արդյունավետությունը մեծապես ապահովում են գրական տարրական հասկացություններն ընթանալու, դրանց օգնությամբ բնագրի Ենթաշերտերի մեջ թափանցելու աշակերտների կարողությունները, որոնք ևս ընթերցողական ունակությունը հասցնում են ընթերցողական հմտության մակարդակի, աշակերտների համար կարդացած ստեղծագործության շուրջ տարվող վերլուծական-համադրական աշխատանքը դարձնում են կարդացած նյութի օգնությամբ կյանքը ճանաչելու նպատակային գործունեություն:

Գրական տարրական գիտելիքների ուսումնասիրումն իրականացվում է մայրենիի դասի ընթերցանության փուլում՝ կարդացած բնագրի շուրջ տարվող աշխատանքի ընթացքում: Այս խնդիրն առավել արդյունավետ լուծելու, կարդացած ստեղծագործության նկատմամբ սովորողների հետաքրքրությունը բորբեկու, գիտակից ընթերցող ձևավորելու համար մենք գրական գիտելիքների ձեռքբերման գործընթացն առաջարկում ենք իրականացնել երկու փուլով.

ա) գրական նախնական գիտելիքների ձեռքբերում,

բ) գրական տարրական գիտելիքների յուրացում:

Գրական նախնական գիտելիքների մեջ նմտնում են՝ վերմագրի, բառի գեղարվեստական արժեքի, տեքստի և թեմայի մասին գաղափարի ու դրանց ընթանման հետ կապված կարողությունների ձևավորումն ու զարգացումը:

Գրական տարրական գիտելիքների մեջ նմտնում են՝ հիմնական մտքի՝ գաղափարի, ենթատեքստի, գործող անձանց կերպարների մասին գիտելիքների ու դրանց հետ կապված կարողությունների ձևավորումն ու զարգացումը դասարանից դասարան:

«Գրական նախնական գիտելիքների ուսումնասիրումը ընթերցողական կարողության ձևավորման գործընթացում» Երկրորդ Ենթագլխում մենք ներկայացնում ենք գրական գիտելիքների բովանդակությունն ու սովորողների ձեռքբերումների նախնական մակարդակը: Մասնավորապես ներկայացնում ենք մեթոդական այն համալիրը, որի միջոցով սովորողները գիտելիքներ են ծեռք բերում ստեղծագործության վերնագրի, բառապաշտի, տեքստի, թեմայի և նրա տեսակների մասին: Փոխգործուն մի քանի մեթոդների կիրառման ճանապարհով մեր կողմից

ԽԵԿ համակարգով կազմակերպած մայրենիի դասերի ժամանակ կրտսեր դպրոցականների ցուցաբերած գիտելիքներն ու կարողությունները մեզ հաճգեցին այն եղրակացության, որ ներողապես ծիշտ աշխատանքներ կատարելու, մասնավորապես գրական նախնական գիտելիքների ուսումնասիրության գործնթացը պարբերաբար և նպատակավաց կազմակերպելու դեպքում աշակերտներն առանց դժվարության յուրացնում են այդ փուլի համար նախատեսված գիտելիքներն ու կարողությունները, որոնք մեծապես նպաստում են ընթերցողական կարողության բաղադրիչների՝ որոշակի մակարդակի ձևավորմանը: Մասնավորապես «Վերնագիր», «բնագիր», «թենա» հասկացությունները նրանց օգնում են կարդացած ստեղծագործության հիմնական մտքի շուրջ դատել՝ իմբ ընդունելով, օրինակ, կարդացած ստեղծագործության վերնագիրը, սովորում են բնագիրը բաժանել տրամաբանական հատվածների, մեկնաբառել դրանցից յուրաքանչյուրում ներկայացված դեպքերը, «կապեր գտնել» հատվածների միջև: Այս կարողությունը զարգացնում է նրանց վերլուծական - համադրական մտածողությունը: «Թենա» հասկացությունը թեև ուսումնական գրական տարրական գիտելիքների նախնական փուլում ամբողջապես չի յուրացվում կրտսեր դպրոցականների կողմից, սակայն ձևավորվում է նրանց՝ ընդհանուրից դեպի մասնավոր՝ առանձինը, գնալու (և ընդհակառակը) մտածական գործունեությունը, որը իմբ կդառնա հետազայում կարդացած ստեղծագործությունը գաղափարական վերլուծության ենթարկելու ժամանակ:

Երկրորդ գլխի երրորդ՝ «Գրական տարրական գիտելիքները որպես ընթերցողական կարողության կարևոր բաղադրիչ» խորագրով ենթագլխում մենք իմն նավորում ենք, որ այս կարևոր խնդիրն իրականացվում է ընթերցվող գեղարվեստական ստեղծագործության շուրջ աշխատանքի ժամանակ վերլուծական-համադրական մեթոդի գործադրմամբ գրական տարրական գիտելիքներ ձեռք բերելու ճանապարհով. դրանք երեխսաներին պետք են գալու ուսուցման հետազա փուլերում և ոչ միայն գրական ընթերցանության ժամանակ: Զնորանանք, որ վերլուծական-համադրական մեթոդն աշակերտներին ծանոթ է դեռևս գրաճանաչության այբբենական փուլից, իսկ հետո այն աշակերտին ուղեկցում է լեզվական գիտելիքների ձեռքբերման գործնթացում: Միաժամանակ, վերլուծելու և համադրելու կարողությունները՝ իբրև բարձրակարգ մտածողության բաղադրիչներ, աշակերտներին պետք են ողջ կյանքում՝ որպես սովորելու, կրթվելու և դաստիարակելու, կյանքում կողմնորոշվելու կարևոր գործոններ:

Այս ենթագլխում ներկայացնում ենք գրական տարրական գիտելիքների բովանդակությունը և ուսումնասիրման հաջողականությունը II-IV դասարաններում.

I – կերպարների էության բացահայտում (ովքե՞ր են դեպքերի մասնակիցները, նրանք դրակա՞ն կերպարներ են, թե՞ բացահայտ (իմնավորում), բնագրի ո՞ր տողերն են հաստատում քո տեսակետը, հեղինակը սիրու՞ն է հերոսին, ինչո՞ւ և այլն.

II – գաղափարի բացահայտում (ո՞րն է հեղինակի իմնական միտքը, ո՞ր կերպարներն են դրա կրողը, ո՞ր բառը, բառակապակցությունը կամ նախադասությունը կարելի է վերնագիր դարձնել).

III – Ենթատերստի բացահայտում (հ՞նչ է ուզում «հասկացնել» հեղինակը, ո՞ր բառերի, բառակապակցության կամ նախադասության տակ է «թաքնված» այն և այլն):

Այս հաջորդականության արդյունավետությունը հիմնավորող մայրենի դասերից (տարբեր դասարանների) բերած հատկածների վերլուծության ճանապարհով մենք ներկայացնում ենք կարդացած ստեղծագործության շուրջ գրական տարրական գիտելիքների յուրացման մեթոդիկան II-IV դասարաններում՝ քայլ առ քայլ նշելով խնդիրների լուծման ընթացքը:

Դիմք ընդունելով մեր ուսումնասիրություններից քաղած տվյալները՝ մենք նախագծել և ուսուցիչների հետ իրականացրել ենք կարդացած բնագրի կերպարների վերլուծության գործընթացի քայլերը:


**Երկրորդ գլխի չորրորդ՝ «Գրական տարրական գիտելիքների ծեռքբերման միջոցով կրտսեր դպրոցականների ընթերցողական կարողության զարգացմանն ուղղված փորձարարական աշխատանքների արդյունքների վերլուծություն» ենթագլխում վերլուծել ենք փորձարարական աշխատանքների արդյունքները:**

Գիտափորձերի արդյունքների հիման վրա կազմվել են ձեռք բերված տվյալների բազա, տեսական հիմնավորումներ, որոնք հիմք են հանդիսացել ինչպես վիճակագրական վերլուծության, այնպես էլ համակարգչային գծապատկերների ստեղծման համար:

Աշխատանքում ներկայացված են ինչպես կրտսեր դպրոցականների ընթերցողական կարողության մակարդակները, այնպես էլ գրական գիտելիքների ծեռքբերումից հետո դրանց շարժմանը վերաբերող վերլուծություններ՝ համապատասխան այցուսակների և գծապատկերների տեսքով:


Գծապատկեր 1

#### Գիտափորձի սկզբում կրտսեր դպրոցականների ընթերցողական կարողության բաղադրիչների նակարդակը ստուգողական խմբերում




Գծապատկեր 2

Գիտափորձի սկզբում կրտսեր դպրոցականների ընթերցողական կարողության բաղադրիչների նակարություն վորոշագրական խնդերում




Գծապատկեր 3

Կարողացած ստեղծագործությամ գաղափարի քննարկման ժամանակ աշակերտների մասնակցության ակտիվությունը գրույցի տարրեր տեսակների կիրառումից հետո



Գծապատկեր 4


Կարդացած ստեղծագործության գաղափարի քննարկման ժամանակ  
աշակերտների նախակցության ակտիվությունը կարդալու տարրեր տեսակների  
կիրառումից հետո



Գծապատկեր 5


Կարդացած ստեղծագործության շուրջ իրականացվող գրական տարրական  
բնույթի վերլուծությունների ժամանակ աշակերտների նախակցության  
ակտիվությունը պատմելու տարրեր տեսակների  
կիրառումից հետո

Ստուգողական դասարան (III<sup>ա</sup> դասարան՝ 27 աշակերտ)




Գծապատկեր 6

Աշակերտների գրական տարրական գիտելիքների ձեռքբերման  
մակարդակների շարժընթացը կարողացած ստեղծագործությունը պատմելու նույն  
տեսակների կիրառումից հետո  
Փորձարարական դասարան (III<sup>թ</sup> դասարան՝ 31 աշակերտ)



Գծապատկեր 7

Ընթերցողական կարողությունների ձևավորվածության  
մակարդակների շարժընթացը ստուգողական և փորձարարական  
դասարաններում գիտափորձից հետո



Գծապատկերից երևում է, որ ստուգողական և փորձարարական դասարաններում (մուգ և բաց գույներով են) ստվորողների ընթերցողական կարողություններն ըստ բնութագրիչների աճել են: Սակայն ստուգողական դասարաններում շարժման ավելի թույլ է: Թեև մենք բնութագրիչները մի փոքր բարդացրել ենք և ծևակերպել ավելի ընդհանրացրած, այնուամենայնիվ ստուգողական և փորձարարական դասարանների ցուցանիշների տարրերությունը տոկոսներով ակնհայտ է:

Բացատրական ընթերցանության մեթոդի «ամփիփում» բաղադրամասի իրականացման ընթացքում թե՛ ստուգողական, թե՛ փորձարարական դասարաններում մենք արձանագրեցինք ընթերցողական կարողությունների բնութագրիչների աճ: Անշուշտ, փորձարարական դասարաններում այդ աճի տոկոսն ավելի ակնառու էր:

Ընթերցողական կարողությունների ծևակորվածության մակարդակների աճը փորձարարական դասարաններում որոշելու համար մենք մշակեցինք բնութագրիչների շարք:

Ուսումնասիրություն իրականացվեց՝ հիմք ընդունելով հետևյալ բնութագրիչները.

- Անծանոթ բնագիրն ընթերցում են կարդալու՝ վերը նշված բոլոր տեսակներով՝ պահպանելով կարդալու բոլոր որակական հատկանիշները:
- Որոշում են կարդացած բնագիրի հիմնական միտքը (գաղափարը՝ առանց ուսուցչի ուղղողորդ հարցերի, մի քանի նախադասությանք հիմնավորում են իրենց տեսակետը):
- Կռահում են հեղինակի ենթատեքստը և վերաբերմունքն իր հերոսների նկատմամբ ու այդ առիթով ծևակերպում պարզ դատողություններ:
- Առանձնացնում են կարդացած ստեղծագործության կերպարները, դրանք խմբավորում ըստ դրական-բացասականի, ըստ օլիսավոր-երկրորդականի, ըստ ընդհանուր հատկանիշների (ուսուցչի օգնությամբ):
- Դիտարկում են ստեղծագործության դեպքերի տրամաբանական հաջորդականությունը, պատճառահետևանքային կապերը՝ գործածելով հեղինակի բառերը և մտքերը:
- Խմբավորում են առաջարկված (ծանոթ) ստեղծագործություններն ըստ վերնագրերի, ըստ ժամրերի:
- Կռահում են առաջարկված ստեղծագործությունները (ասում են վերնագրերը):
- Ըստ առաջարկված հատվածի՝ որոշում են ստեղծագործությունն ու նրա հեղինակին:

**Ստուգողական և փորձարարական դասարանների աշակերտների  
ընթերցողական կարողությունների բնութագրիչների  
համեմատական շարժընթացը**

Բնութագրիչները	Ստուգողական դասարան	Փորձարարական դասարան	Տարրերությունը %-ով
1	39%	72%	33%
2	31%	62%	31%
3	21%	51%	30%
4	40%	52%	12%
5	48%	59%	11%
6	52.5%	72%	19.5%
7	58%	82%	24%
8	40%	88.5%	48.5%

Այսիսով՝ համրապետության մի շարք դպրոցների տարրական դասարաններում անցկացրած գիտափորձերի արդյունքների վերլուծությունից պարզ դարձավ, որ գրական տարրական գիտելիքները մեծապես նպաստում են կրտսեր դպրոցականների ընթերցողական կարողության ձևավորմանը: Գիտափորձերի ընթացքում մեր իրականացրած աշխատանքները մեզ հնարավորություն տվեցին մշակելու այդ գործընթացի արդյունավետությունը բարձրացնող մեթոդական համակարգ:

Ատենախոսությունն ավարտվում է եզրակացություններով, որոնք մեր հիմնախնդրի հանգամանալից և խորը վերլուծության արդյունքներն են ու դրանցից բխող եզրահանգումները:

1. Գրական տարրական գիտելիքների ուսումնասիրման պատմական փորձի և մեթոդաբանության, տարրական դպրոցում մայրենի ուսուցման տեսությանը և պրակտիկային նվիրված լեզվաբանական, հիգիենամանակավարժական ու մեթոդական գրականության վերլուծությունը հիմնավորեց մեր այն կանխավարկածը, համաձայն որի գրական տարրական գիտելիքների ուսումնասիրությունը հնարավոր է կազմակերպել բացատրական ընթերցանության մեթոդի բաղադրամաերով իրականացվող մայրենի դասի ընթացքում՝ նպաստելով կրտսեր դպրոցականների ընթերցողական կարողության ձևավորմանը:

2. Տարրական դպրոցի մայրենի արդի դասընթացի բովանդակության, դասագրքերի մեթոդական կառույցների և մայրենի դասագործներացի իրականացման մեթոդաբանությունն ու գրական տարրական գիտելիքների ուսումնասիրման հնարավորությունների տեսանկյունից այդ դասի «ընթերցանություն» բաղադրիչի վերլուծությունը և անցկացրած հետազոտությունները մեզ ընձեռնեցին կրտսեր դպրոցականների ընթերցողական կարողությունների ձևավորման և դրանց՝ նոր մակարդակի բարձրացման գործընթացի առանձնահատկություններն ուսումնասիրելու, անհրաժեշտ գիտելիքների և կարողությունների բովան-

դակությունն ու ծավալը որոշելու, դրանց հիման վրա մեթոդական համալիր ձևավորելու հնարավորություն:

3. ՀՀ տարրական մի շարք դպրոցներում հետազոտվող հիմնախնդրի ուղղությամբ իրականացված փորձարարական աշխատանքի ընթացքում բացահայտվեց, որ գրական տարրական գիտելիքների փուլային ուսումնասիրումը նպաստում է կրտսեր դպրոցականների ընթերցողական կարողությունների զարգացմանը և դրանց գործնականում նոր նակարդակի բարձրացմանը, եթե այն իրականացվում է չափորոշահեն սկզբունքով՝ հաշվի առնելով սովորողների ընթերցողական պահանջմունքներն ու կարողությունների նակարդակը, ճանաչողական հետաքրքրություններն ու աշակերտական դասանպատակները:

4. Ուսումնասիրությունների ընթացքում ձևավորված և գիտափորձով հիմնավորված մեր կողմից մշակված ընթերցողական կարողությունների բնութագրիչները ձևավորող մայրենի դասի կառուցվածքի և բովանդակության մեջ ներառվող փուլային սկզբունքով կառուցված մեթոդական քայլերի համալիրը նպաստում է կրտսեր դպրոցականների ընթերցողական կարողության ձևավորմանը:

5. Կրտսեր դպրոցականների ընթերցողական կարողությունների՝ մեր կողմից մշակված ցուցանիշները բնութագրում են կրթության այս օյակում սովորողների ընթերցողականության նակարդակը և կիրառելի են ոչ միայն մայրենի դասազործներացում, այլև ընթերցողական կարողության որոշակի նակարդակ պահանջող տարրական դպրոցում դասավանդվող այլ առարկաների դասերի ժամանակ:

Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են հեղինակի հետևյալ հրապարակումներում.

1. Սիմոնյան Վ.Վ., «Իմ նկատառումները կրտսեր դպրոցում պարապող ուսուցիչների մասին», «Մսիթար Գոշ» գիտամեթոդական հանդես, հասարակական գիտություններ, հ.3, 2008, Երևան, էջ 92-93:
2. Սիմոնյան Վ.Վ., «Բացատրական ընթերցանության բաղադրամասերի միջոցով կրտսեր դպրոցականների գրական տարրական գիտելիքների ձեռքբերման գործընթացի ուսումնասիրման արդյունքների վերլուծություն», «Կրթությունը և գիտությունը Արցախում», հ. 1-2, 2014, Երևան, էջ 90-95:
3. Սիմոնյան Վ.Վ., «Ընթերցասիրությունն ու ընթերցողական կարողությունը որպես ազգային անվտանգության, ազգի առաջընթացի կարևոր գործոններ», «Մամկավարժական միտք», հ 3-4, 2014, Երևան, էջ 51-56:
4. Սիմոնյան Վ.Վ., «Գրական տարրական գիտելիքների ուսումնասիրման գործընթացի փուլերը և առանձնահատկությունները տարրական դպրոցում», «Դայագիտական հանդես», 2014, Երևան, հ. 2-3 (26-27), էջ 278-284:

**СИМОНЯН ВАРДИТЕР ВЛАДИМИРОВНА  
ЭЛЕМЕНТАРНЫЕ ЛИТЕРАТУРНЫЕ ЗНАНИЯ КАК ОСНОВА ФОРМИРОВАНИЯ  
НАВЫКОВ ЧТЕНИЯ У МЛАДШИХ ШКОЛЬНИКОВ**

Защита диссертации состоится 28 ноября 2014 г. в 14<sup>00</sup>, в сессии 065  
профессионального совета комиссии педагогики, действующим при ЕГУ

Адрес: 0025, Ереван, Абовян 52а, корпус армянского филологического  
факультета, аудитория № 203

**РЕЗЮМЕ**

**Актуальность темы**

Сегодня, как никогда, образование оценивается как фундаментальная, жизненно важная ценность, а на мировом рынке главным условием эффективной конкуренции считается уровень образованности общества со своими ценностями. Одновременно “образованность”, в качестве дескриптора личности, общества, государства, приобрела совсем другие качественные свойства.

При обучении поколений в условиях беспрецедентного развития информационных технологий, более того, современные системы продвинуто развитых или развивающихся стран в области образования всерьез обеспокоены функциональной грамотностью, при этом, границы понятия грамотности расширяются изо дня в день, включая множественные элементы, среди которых чтение имеет свое особое место. При квалификации грамотности оно является “ключом века”, источником приобретения постоянных национальных и общечеловеческих ценностей.

В обучении поколений сегодня все обеспокоены и встревожены спадом интереса в отношении чтения у школьников, причина которого обусловлена обольщениями молодого поколения (и не только). Все меньше рассматриваются методы формирования навыков чтения, все меньше значимости предается отсутствию навыков чтения и потребности в чтении.

Безусловно, что каждая потребность рождается в человеке и рождается под воздействием разных факторов. Потребность в чтении должна рождаться с первых моментов обучения к чтению. То есть, сперва должна формироваться и развиваться потребность ребенка в чтении, затем только он должен учиться читать. Важно отметить, что если ребенок не удовлетворил свой интерес к чтению даже на этапе формирования элементарной способности чтения, не воспламенил свою потребность в чтении, то в нем любовь к чтению не родится, его потребность в чтении не углубится; не секрет, что содержание человеческой жизни в общем обусловлено потребностями. Не случайно сегодня параллельно с указанными задачами педагоги и методисты производят исследования для установления причин указанных явлений, разработки методической системы, направленной на формирование навыков чтения у учащихся.

**Актуальность исследования**, с одной стороны, обусловлена важным условием обучения многосторонне развитой, многокультурной, начитанной, с высокими навыками чтения и постоянно обучающейся личности для поддержания нашей страны постоянно конкурентоспособной в постоянно текущих политических, мировых социально-экономических процессах, а с другой стороны, несоответствием актуальности методической системы, способствующей призванию к жизни этой потребности во время урока родного языка и направленной на формирование указанных навыков и качеств в элементарной школе.

**Цель исследования:** усовершенствование методической системы, способствующей развитию навыков чтения у младших школьников.

**Научная новизна исследования:**

- Процесс формирования способностей чтения у младших школьников рассмотрен как с методологической, так и с педагогической и психологической точки зрения, принимая цели школьников на уроке родного языка в качестве приоритета.
- Разработаны содержание и методика работы по исходному материалу, направленной на понимание элементарных литературных знаний и осуществляющей аналитико-сопоставительным методом и интерактивными методическими навыками.
- По научному опыту проверено и обосновано то, что исследование элементарных литературных знаний по исходному материалу, прочитанному во время урока родного языка в элементарной школе, способствует пониманию исходного материала, влиянию на систему ценностей ребенка и формированию навыков чтения.

**Теоретическое и практическое значение исследования.**

Вопросы, изученные в исследовании, и их обоснования выдвинули новые подходы в системе элементарного преподавания родного языка в процессе формирования способностей чтения.

Полученные данные, методологические обоснования, рекомендации и требования-ориентировки могут быть полезны для учителей элементарных школ, студентов педагогических вузов, авторских групп составляющих учебники, лекторов, преподающих теоретические и практические занятия по методике армянского языка.

Разработаны навыки проведения чтения интерактивными методами на уроке родного языка, направленными на формирование способности чтения и ее превращение в навыки.

Разработанные нами способы применения интерактивных методических навыков для осознанного понимания младшими школьниками элементарных литературных знаний содействуют формированию любви и интереса у младших школьников к чтению, а также причинности процесса чтения.

**VARDITER VLADIMIR SIMONYAN**  
**AN ELEMENTARY LITERARY KNOWLEDGE AS THE BASIS OF THE JUNIOR STUDENT'S**  
**READING ABILITY**

Dissertation defense will take place on November 28, 2014 at the 065 Professional Council of HQC pedagogy, acting at the YSU

Address: 0025, Yerevan, Abovyan 52a, subsidiary building of Armenian Philology faculty, auditorium № 203

**SUMMARY**

**The relevance of the theme.**

Currently, as ever, the education is assessed as fundamental and vital value, and in global market the main condition of efficient competition is the educational level of societies with their values. At the same time "education", as a weapon of an individual, a society, a country, has acquired quite different qualitative features.

Due to the unprecedented development of information technology the modern systems of the developed or developing countries, that are interested in the functional education of the generation, are seriously agitated by the functional literacy of the societies, moreover, borders of literacy concept are being extended including multi component elements, in which reading has its unique place. It is the "century key" of the literacy qualification, the source of acquiring national and universal values.

Today each person deeply interested in generation literacy is concerned and worried about the decrease of interest of students in reading, which is explained by the fact, that the younger generation is less attracted by reading (and not only). The methods of formulating reading abilities are less reviewed and the dimension of reading ability and even the absence of it are less considered.

It is indisputable that each dimension is born in human and is born under the influence of different factors. Reading requirement should be born right at the moment of teaching reading. This means that first the dimension of the child's reading should be formulated, and then he/she should begin to read. It is essential to mention, that if the child does not satisfy his/her reading interest during the formation of his/her elementary reading ability and does not inflame his reading dimension, he/she will never get entertained by reading and will not deepen his/her reading dimension. It is not a secret that the content of life, in general, is due to its dimension. It is not accidental that currently parallel to the above-mentioned concerns, pedagogues and methodologists carry out researches to reveal the causes of the mentioned phenomenon and to develop a methodological system for the educators who, in their turn, will encourage reading abilities in learners.

The relevance of the theme is due to the vital necessity that in one hand it is essential to educate a person who will be multi-developed, multi-cultured, intellectual, who will

possess high reading abilities and be educated for life and hold our country competitive in the global processes of political, social-economical changes. On the other hand it is directed to the development of the mentioned abilities and qualities for elementary schools the teaching system of which is inconsistent and incomplete.

**The purpose of research:** To develop a methodological system that will promote reading abilities with the junior students.

**The novelty of research:**

- There has been reviewed the formation of reading ability process with the junior students both from the methodological and pedagogical-psychological perspective giving priority to the student goals of language lesson.
- Based on the authentic material and through the analytical-comparative and interactive methods there has been developed comprehension of elementary literature.
- Through the scientific experiment there has been checked and proved that the implementation of knowledge of elementary literature during the classes at elementary schools promotes to the comprehension of authentic texts, which influences on learners' system of values and helps to form reading skills.

**The theoretical and practical significance:**

The issues and corroborations raised during the research offer new approaches for the formation of reading skill process in the system of elementary teaching.

Implementation knacks with interactive methods of components for language lesson have been developed which are directed to the solution of reading ability issue and turning it into a skill.

The developed methods for perceiving interactive methodological approaches by junior students will facilitate to the formation of reading interest and love among students, as well as the incentive of the reading process.

Received results, methodological corroborations, guaranties and request-orientations can be useful for elementary school teachers, students of pedagogical universities, copyright groups of textbook writers, lecturers carrying out theoretical and practical trainings.









